ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
№16/08

Քաղ. Երևան 27 հունիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. հունիսի 27-ի նիստում (արձանագրություն № 62/3) քննարկեց P.T.PUTRA STABAT INDUSTRI (ID) ընկերության ներկայացուցիչ, ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի 2008թ. ապրիլի 28-ի դիմումը THONG CONG TY THUOC LA VIETNAM (VN) Vinataba IR 767662 համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ԱԾՄԴ-ի 34-րդ դասի ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Դիմողի փաստարկները հետևյալն են:

Դիմողը դիմումում նշել է, որ P.T.PUTRA STABAT INDUSTRI (ID) ընկերությանը հայտնի է դարձել, որ THONG CONG TY THUOC LA VIETNAM (VN) ընկերությանը պատկանող Vinataba IR 767662 միջազգային գրանցմամբ համակցված ապրանքային նշանը, որը գրանցված է 34-րդ դասի «ծխախոտ, սիգարետներ» ապրանքների համար, չի օգտագործվել և չի օգտագործվում Հայաստանի Հանրապետության տարածքում:

Ելնելով դրանից և հիմք ընդունելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 22-րդ հոդվածի 4-րդ մասը, համաձայն որի «Ապրանքային նշանի գրանցման գործողությունը կարող է ցանկացած անձի դիմումի հիման վրա, բողոքարկման խորհրդի որոշմամբ, դադարեցվել վաղաժամկետ բոլոր ապրանքների, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված 5 տարվա ընթացքում, կամ դիմումն ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող 5 տարվա ընթացքում այն անընդհատորեն (ընդհանրապես) չի օգտագործվել ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ օրենքի 26 հոդվածի համաձայն՝ լիցենզային պայմանագրով այդ իրավունքն ունեցող անձի կողմից», դիմողը խնդրել է Vinataba IR 767662 միջազգային գրանցմամբ համակցված

ապրանքային նշանի գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԾՄԴ 34-րդ դասին վերաբերող ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնել:

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ նաև կարգ) 34-րդ կետի համաձայն 04.04.08թ. հետծանուցմամբ փոստային առաքմամբ ծանուցել է 2008թ. մայիսի 4-ին հետծանուցմամբ փոստային առաքմամբ ծանուցել է Vinataba IR 767662 ապրանքային նշանի սեփականատեր THONG CONG TY THUOC LA VIET NAM ընկերությանը (25A Ly Thuong Kiet, Quan Hoan Kiem Ha Noi, Viet Nam) և դրա ներկայացուցչին՝ PHAM & ASSOCIATES ընկերությանը (8Tran Hung Dao, Quan Hoan Kiem Ha Noi Viet Nam) բողոքարկման խորհրդի կողմից 2008թ. ապրիլի 28-ի ՀՀ հավատարամատար Ա.Գալոյանի ներկայացված դիմումը քննարկման ընդունելու, նիստի անցկացման թվականի (2008թ. հունիսի 26), ՀՀ արտոնագրային հավատարմատարի միջոցով դիմումի վերաբերյալ իր առարկությունները նիստի անցկացման օրվանից ոչ ուշ քան 10 օր առաջ ներկայացնելու և իր շահերը պաշտպանելու մասին: Ըստ 11.06.08թ. գործակալությունում ստացված հետծանուցման, հասցեատիրոջ կողմից ծանուցումները ստացվել են 16.05.08թ., սակայն 2008թ. հունիսի 27-ի բողոքարկման խորհրդի նիստին սեփականատիրոջ որևէ ներկայացուցիչ չի ներկայացել, ինչպես նաև սեփականատիրոջից որևէ գրավոր արձագանք բողոքարկման խորհուրդը չի ստացել:

Դիմումում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված նյութերը, ինչպես նաև հաշվի առնելով նիստում դիմումի ըստ էության քննարկման արդյունքները և այն փաստը, որ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ապրանքային նշանի օգտագործման ապացույցները պետք է ներկայացնի դրա սեփականատերը, տվյալ դեպքում՝ THONG CONG TY THUOC LA VIET NAM (VN) ընկերությունը, որը պատշաճ ծանուցված է եղել, սակայն 2008թ հունիսի 27-ի բողոքարկման խորհրդի նիստին չի ներկայացել և օգտագործման որևէ ապացույց չի ներկայացրել, ինչից կարելի է եզրակացնել, որ ընկերությունը Vinataba IR 767662 միջազգային գրանցմամբ համակցված ապրանքային նշանը չի օգտագործել Հայաստանում, բողոքարկման խորհուրդը համարում է, որ նշված ապրանքային նշանը չօգտագործելու վերաբերյալ ՀՀ հավատարամատար Ա.Գալոյանի դիմումում բերված փաստարկները հերքելու հիմքեր չկան, և դիմումը ենթակա է բավարարման:

Ելնելով դրանից և ղեկավարվելով օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 79-րդ կետի «ա» ենթակետով, բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել ՀՀ հավատարամատար Ա.Գալոյանի 2008թ. ապրիլի 28-ի դիմումը ամբողջովին և THONG CONG TY THUOC LA VIET NAM (VN) ընկերության Vinataba IR 767662 համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ԱԾՄԴ-ի 34-րդ դասին վերաբերող ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան